ՊԱՇՏՈՆ	Անձնակազմի ուսուցման և զարգացման կենտրոնի ավագ դասընթացավար (Senior Trainer)
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	09/08/24
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անորոշ

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է Անձնակազմի ուսուցման և զարգացման կենտրոնի դասընթացավարի (Senior Trainer) ստորև ներկայացված պարտականությունների իրականացման նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բանկի աշխատակիցների պարբերական վերապատրաստումների կազմակերպում և իրականացում,
- Աշխատակիցների շարունակական զարգացման կարիքների ուսումնասիրություն և ուսուցման ուղղությունների բացահայտում,
- Աշխատակիցների համար ուսուցողական նյութերի մշակում, ներքին և արտաքին դասընթացների կազմակերպում,
- Նոր ընդունված աշխատակիցների onboarding-ի կազմակերպում, ծրագրերի մշակում և իրականացում,
- Աշխատակիցների տարեկան զարգացման պլանի հիման վրա դասընթացների մշակում՝ համագործակցելով շահագրգիռ ստորաբաժանումների հետ,
- Մասնագիտական տեղեկատվական ռեսուրսների հավաքագրում և տրամադրում Բանկի համապատասխան ստորաբաժանումներին և աշխատակիցներին,
- Ուսուցման և վերապատրաստման մեթոդների ու եղանակների բարելավում՝ կիրառելով միջազգային լավագույն փորձն ու նորամուծությունները
- Էլեկտրոնային դասընթացների պատրաստում,
- Իրականացված վերապատրաստման ծրագրերի արդյունավետության գնահատում և արդյունքների ամփոփում,
- Վերապատրաստման տարեկան պլանի և բյուջեի կազմման աշխատանքներին մասնակցություն,
- Բանկի աշխատակիցների ատեստավորման գործընթացի կազմակերպում, արդյունքների ամփոփում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Բանկային փորձը կդիտվի որպես առավելություն
- Նվազագույնը 2 տարվա դասընթացների անցկացման փորձ
- Համակարգչային ծրագրերի իմացություն՝ Power Point, iSpring, Powtoon, Canva ծրագրերի լավ իմացություն
- Ներքին պորտալների նյութերի հավաքագրման և կայքերի մշակման և թարմացման փորձ,
- Հայերենի՝ գերազանց, անգլերեն և ռուսերեն լեզուների լավ իմացություն
- Պրեզենտացիոն հմտություններ
- Ուսուցողական նյութերի մշակման հմտություններ
- Հաղորդակցման և թիմում արդյունավետ աշխատելու հմտություններ
- Սպասարկման և վաճառքի հմտություններ
- Կազմակերպչական հմտություններ
- Աշխատանքի ճիշտ կազմակերպման և ժամանակի կառավարման հմտություններ
- Խնդիրների արագ ու արդյունավետ լուծման կարողություններ
- Միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/58 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/: